ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 130-ԱՄՅԱԿԻՆ

Նոյեմբերի 6-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյակին նվիրված հանդիսությունները եզրափակվեցին Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում տեղի ունեցած տոնական համերգով:

Հանդիսության ընթացքում «Էջ Միածին ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը՝ նվիրված ճեմարանի 130-ամյակին, որն ընթերցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

«Տևական դադարից հետո Գևորգ Զ երախտարժան Կաթողիկոսի ձեռքով վերաբացվեց ճեմարանը և Վազգեն Ա ու Գարեգին Ա երջանկահիշատակ Հայրապետների բարեխնամ հոգածության ներքո՝ հոգևոր սպասավորության ճանապարհեց հարյուրավոր եկեղեցականների: Այսօր Հայ Եկեղեցու անդաստանում, նրա հայաստանյան և արտերկրյա տարբեր թեմերում նվիրումով ծառայում են ճեմարանի ավագ և կրտսեր սերնդի շրջանավարտները, ովքեր սիրով ուսանեցին ու հաստատվեցին հոգևորականի իրենց կոչման մեջ: Մենք նույնպես երախտապարտ շրջանավարտը Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի՝ նույն խնամքով ու նախանձախնդրությամբ պիտի հոգանք, որ ճեմարանը գործի լիաշունչ և, ինչպես 130-ամյա իր պատմությամբ է, շարունակի լինել անբաժան մասը հայոց հոգևոր կյանքի և ողջ հայ իրականության: Շարունակի լինել ու մնալ բազմադարյա ավանդների անխաթար պահպանողն ու փոխանցողը Սահակ-Մեսրոպյան դպրոցի և դարերի մեջ գործած վանական մեր բոլոր դպրոցների, որ կրթեցին աստվածասեր ու հայրենասեր հոգին մեր ժողովրդի, արարչագործ ու հանճարածնունդ ոգին և անեղծ պահեցին քրիստոնեական մեր հավատը՝ որ հայոց երկնքում վառ ու պայծառ և հավետ փայլի կանթեղի լույսը Սուրբ Լուսավորչի, խավարացիր իր զորությամբ մթության ու խութերի միջից առաջնորդի դեպի խաղաղ ու օրհնյալ ափեր և լուսավորի ազատ կյանքի հաղթանակները»,- ասվում է Հայրապետական կոնդակում (տե՛ս էջ 6):

Նշանակալից այս իրադարձության առիթով իրենց շնորհավորական ուղերձներն էին հղել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը և ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը:

«Հայաստանում գործող ամենահին բարձրագույն ուսումնական հաստատությունը բացառիկ է իր հարուստ փարեգրությամբ: Նրա էջերը արտացոլումն են մեր ժողովրդի վերջին 130 տարվա հոգևոր, կրթամշակութային կյանքի պատմության:

Գևորգյան Ճեմարանը կրթել և ասպարեզ է հանել հայ հոգևորականության և մտավորականության բազմաթիվ սերունդներ: Նրանց անձնվեր ծառայությունը և հայրենանվեր գործունեությունը վեր է ամեն մի գնահատականից»,- ասվում է ՀՀ նախագահի շնորհավորական ուղերձում (տե՛ս էջ 12):

«Գևորգյան Ճեմարանը մեր ժողովրդի եզակի կրթամշակութային օջախներից է, որը Սուրբ Էջմիածնի հովանու ներքո փասնամյակների իր բեղուն գործունեությամբ, ըստ ամենայնի, վաստակել է հայոց ազգային արժեքների շարքը դասվելու պատիվն ու իրավունքը: Հայոց մեծերի բազում սերունդներ իրենց մկրտությունն ստանալով սրբություն սրբոց այս կրթօջախում՝ նվիրումով ու տքնանքով են ծառայել մեր դպրությանն ու մշակույթին»,- նշվում է ՀՀ վարչապետի շնորհավորական ուղերձում (տե՛ս էջ 13):

Համերգին ներկա էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հայաստանի և Սփյուռքի թեմական առաջնորդներ, կառավարության ներկայացուցիչներ, մշակույթի և գիտության գործիչներ:

Հանդիսությանը գեղարվեստական հայտագրով հանդես եկան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի, Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաները, «Հովեր» երգչախումբը, Կոմիտասի անվան քառյակը և ՀՀ պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ